ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

GENERAL PROCURACY OF THE
REPUBLIC OF ARMENIA

ГЕНЕРАЛЬНАЯ ПРОКУРАТУРА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

375010, ք. Երևան, Վ. Սարգսյանի փ. 5 375010, г. Ереван, ул. В. Саркисяна 5 V. Sargsyan Str., Yerevan 375010

№ 12-01-13
«22» 04 2015 թ.

Թիվ 62210814 քրեական գործով
կրուժող Ալեքսանդր Ցվերիանովի
ներկայացուցիչ Արթուր Սաքունցին
(ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59)

ՈՒղարկում եմ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննված թիվ 62210814 քրեական քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու 31.03.2015թ. կայացված որոշման դեմ բերված ձեր բողոքը մերժելու մասին որոշումը:

Հայտնում եմ, որ որոշման հետ համաձայն չլինելու դեպքում, որոշումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում այն կարող եք բողոքարկել դատարան:

Առդիր՝ որոշումը՝ 5 թերթ:

Հատկապես կարևոր գործերով քննության
վարչության ավագ դատախազ՝

Գ.Գևորգյան

ՈՐՈՇՈՒՄ

բողոքը մերժելու մասին

22.04.2014թ. ք.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության ավագ դատախազ Գ.Վ. Գևորգյանս, ստուգելով ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի առանձին պաշտոնատար անձանց կողմից բռնությամբ զուգորդված պաշտոնեական լիազորությունների անցում կատարելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցված թիվ 62210814 քրեական գործի նյութերն ու քննարկելով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին 2014 թվականի մարտի 31-ի որոշման դեմ տուժող Ալեքսանդր Ցվերիանովի ներկայացուցիչ Արթուր Սաքունցի բողոքը,

ՊԱՐԶԵՑԻ՝

2014 թվականի մայիսի 20-ին ՀՀ գլխավոր դատախազություն է մուտք է եղել Ալեքսանդր Ցվերիանովի դիմումն այն մասին, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի պետական հատուկ ծառայություն իրականացնող պաշտոնյաները 2012 թվականի նոյեմբերի 30-ին՝ ժամը 07.30-ի սահմաններում, իրեն բերման են ենթարկել բաժին, որտեղ բռնության և հատուկ միջոցների գործադրմամբ հարկադրել են խոստովանել տարբեր գողությունների կատարում, որոնց հետ իրականում առնչություն չի ունեցել:

Հիշյալ դիմումն ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն, որտեղ 2014 թվականի հունիսի 4-ին ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 62215113 քրեական գործը՝ ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի առանձին պաշտոնատար անձանց կողմից բռնությամբ զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքի առթիվ:

2015 թվականի մարտի 31-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Վ.Ավետիսյանի կողմից որոշում է կայացվել քրեական հետապնդում չիրականացելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին՝ ոստիկանության ծառայողների և Ալեքսանդր Ցվերիանովի գործողություններում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2015 թվականի ապրիլի 15-ին Ալեքսանդր Ցվերիանովի ներկայացուցիչ Արթուր Սաքունցը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ վերը նշված որոշումը վերացնելու պահանջով՝ հայտնելով, որ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը անհիմն է, չի կատարվել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն:

Ստուգելով քրեական գործի նյութերը և քննարկելով տուժողի ներկայացուցիչ Ա.Սաքունցի բողոքը՝ գտնում եմ, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քրեական գործով նախաքննությունը կատարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ, կայացված որոշումը օրինական և հիմնավոր է, իսկ բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանություններով.

Ալեքսանդր Ցվերիանովը ցուցմունքներ է տվել այն մասին, որ 2012 թվականի նոյեմբերի 30-ին՝ ժամը 07.30-ից 09-ի սահմաններում, ոստիկանության Էրեբունու բաժնի ՔՀԲ պետի տեղակալ Մամիկոն Հակոբյանը, ՔՀԲ օպերլիազորներ Արտավազդ Պետրոսյանը, Արմեն Մկրտչյանն ու մի ստաժոր, ում անունը չի իմացել, եկել են Երևանի Նոր Արեշի 24-րդ փողոցի 35-րդ տան իր կողմից վարձակալված սենյակ, խուզարկել են իրեն ու

սենյակը, սակայն ոչինչ չգտնելով՝ ձեռքերին ձեռնաշղթա են գցել և տարել ոստիկանության Էրեբունու բաժին: Այնտեղ իր իրավունքները չեն բացատրել, չեն խուզարկել: Ի պատասխան ՔՀԲ պետ Գևորգ Հակոբյանի հարցի՝ հայտնել է, որ գողություններ չի կատարել: Դրանից հետո ՔՀԲ պետը, նրա տեղակալ Մամիկոն Հակոբյանը, օպերլիազորներ Արտավազդ Պետրոսյանն ու Արմեն Մկրտչյանը սկսել են ձեռքերով ու ոտքերով հարվածներ հասցնել իր մարմնի տարբեր մասերին, հարկադրել, որ խոստովանի, թե իբր գողություններ է կատարել: Հարվածել են նաև ռետինե մահակով, սպառնացել էլեկտրահարող սարքով, հայհոյել են, կտտանքների ենթարկելու սպառնալիքներ տվել, նվաստացրել են իր պատիվն ու արժանապատվությունը, սակայն հարվածների հետևանքով մարմնական վնասվածքներ չի ստացել, միայն գլխի հետնամասի ու ներբանների շրջանում այտուցվածություն է առաջացել: Այդ ամենից հարկադրված՝ համաձայնել է խոստովանել, թե իբր գողություններ է կատարել: Դրանից հետո ոստիկանության հիշյալ աշխատակիցների վերաբերմունքն իր նկատմամբ փոխվել է, նրանք սկսել են իր հետ լավ վերաբերվել, թույլ են տվել ծխել, զուգարան գնալ, իր խնդրանքով կոնյակ են հյուրասիրել: Մամիկոն Հակոբյանի առաջարկով համաձայնվել է 15-20 գողության դեպք խոստովանել: Այնուհետև Արտավազդ Պետրոսյանը թարգմանչի ներկայությամբ իրենից բացատրություն է վերցրել, որի ժամանակ խոստովանել է, թե իբր գողություններ է կատարել: Խոստովանական բացատրությունը տվել է մինչ այդ ոստիկանության հիշյալ աշխատակիցների կողմից իր նկատմամբ կիրառված բռնությունների, սպառնալիքի, իր պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արդյունքում: Ինչպես թարգմանչի ներկայությամբ, այնպես էլ բացատրությունը տալուց հետո, իրեն կրկին օղի են հյուրասիրել, որը խմել ու հարբել է: Երեկոյան իրեն տարել են Էրեբունու քննչական բաժնի քննիչ Ռոբերտ Թունիյանի մոտ, ով ձերբակալել է իրեն ու ուղարկել ՁՊՎ: Սթափության վիճակի ստուգման նպատակով իրեն բուժհաստատություն չեն տարել: Հաջորդ օրն առավոտյան իրեն տեղափոխել են ոստիկանության Էրեբունու բաժին, և քննիչ Թունիյանի աշխատասենյակում՝ պաշտպան Անժելա Հոբոսյանի ներկայությամբ, ինչ-որ փաստաթղթեր է ստորագրել, բայց չի հիշում՝ ցուցմունք տվել է, թե ոչ: Այնուհետև քննիչը օպերլիազորներ Արտավազդ Պետրոսյանի ու Արմեն Մկրտչյանի, ստաժորի ուղեկցությամբ իրեն տարել է՝ մատնացույց անելու այն վայրերը, որտեղից գողություններ է կատարել: Քննչական գործողությանը մասնակցել է նաև պաշտպանը, բայց թարգմանիչն իրենց հետ չի եղել: Դեպքի վայրերը մատնացույց անելու ժամանակ Արտավազդ Պետրոսյանի, ստաժորի ու քննիչ Թունիյանի հետ գտնվել է վերջինիս ավտոմեքենայի մեջ: Իրականում Պետրոսյանն ու ստաժորն են քննիչ Թունիյանի գիտությամբ ցույց տվել այն տեղերը, որոնք ինքը քննչական գործողության ժամանակ վերջիններիս ուղղորդմամբ մատնացույց է արել. դեպքի վայրերից որևէ մեկում (բացի նախորդ օրը ոստիկանների կողմից իրեն ցույց տրված 2 հասցեներից) դրանից առաջ չի եղել: Իր պաշտպանը թեև մասնակցել է քննչական փորձարարությանը, բայց հանգամանքների բերումով չի հասկացել, որ իրականում ինքը չի առաջնորդել և մատնացույց արել դեպքի վայրերը: Հայտնել է, որ քննչական փորձարարությանը մասնակցող ընթերականներից յուրաքանչյուրին ոստիկանության օպերլիազորները 2.000-ական դրամ են տվել: Քննչական փորձարարության ավարտից հետո, երբ վերադարձել են ոստիկանության բաժին, ՔՀԲ պետ Հակոբյանը, գոհ լինելով, որ քննչական փորձարարության ժամանակ ընդունել է, թե իբր ինքն է մատնանշված դեպքի վայրերից գողություններ կամ գողության փորձեր կատարել, իրեն հյուրասիրել է խորոված և օղի: Չցանկանալով ոստիկանության աշխատակիցների կողմից կրկին բռնությունների ենթարկվել, վախենալով դրանից՝ 2012 թվականի դեկտեմբերի 3-ին առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչել: Իր համար պարզ է եղել, որ քննիչ Թունիյանն օպերլիազորների ընկերն է և նրա համար միևնույնն է՝ իրականում ինքն այդ գողությունները կատարել է, թե ոչ:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի ՔՀԲ պետի պաշտոնը զբաղեցրած Գևորգ Հակոբյանը, ՔՀԲ պետի տեղակալ Մամիկոն Հակոբյանը, ՔՀԲ ավագ օպերլիազորներ Արտավազդ Պետրոսյանն ու Արմեն Մկրտչյանն իրենց նույնաբովանդակ ցուցմունքներում հերքել են Ալեքսանդր Ցվերիանովի նկատմամբ բռնություն գործադրելու, նրան սպառնալիքներ տալու, վիրավորելու, ալկոհոլ տալու, ոստիկանության բաժնում ապօրինի պահելու, իրավունքները խախտելու ցանկացած դրսևորում, հայտնել են, որ նրա հետ վարվել են հարգալից, վերջինս զրպարտում է իրենց և ցանկանում այդ կերպ խուսափել կատարած հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից:

Արտավազդ Պետրոսյանն ու Արմեն Մկրտչյանը հայտնել են նաև, որ իրացնելով ստացված օպերատիվ տեղեկությունները, իրենք են 2012 թվականի նոյեմբերի 30-ին՝ ժամը 16.00-ին, Ալեքսանդր Ցվերիանովին Երևանի Նոր Արեշի 24-րդ փողոցի 35-րդ տնից բերման ենթարկել ոստիկանության Էրեբունու բաժին, կազմել բերման ենթարկելու վերաբերյալ արձանագրություն, բացատրել նրա իրավունքները, անձնական խուզարկության ենթարկել: Տեղեկանալով, որ կասկածվում է գողություններ կատարելու մեջ, նախ բանավոր, ապա նաև թարգմանչի ներկայությամբ տրված բացատրությամբ ընդունել է այդ հանգամանքը: Բերման ենթարկվելուց հետո Ցվերիանովը գտնվել է Արտավազդ Պետրոսյանի աշխատասենյակում, որտեղ այդ ընթացքում մտել և դուրս են եկել ՔՀԲ պետ Գևորգ Հակոբյանն ու նրա տեղակալ Մամիկոն Հակոբյանը, ովքեր ընդամենը մի քանի բառ են փոխանակել բերման ենթարկվածի հետ, դրական գնահատել այն հանգամանքը, որ նա խոստովանում է գողություններ կատարելու հանգամանքը:

Նույն օրը Ցվերիանովի վերաբերյալ կազմված փաստաթղթերն ուղարկվել են քննչական բաժին, որտեղ քննիչ Ռոբերտ Թունիյանը նրան ձերբակալել է և սթափության վիճակի ստուգման ուղեգիր տվել, բայց քանի որ ձերբակալվածը ստուգման ենթարկվելուց կտրականապես հրաժարվել է, դրա վերաբերյալ տեղեկանք է կազմվել, և նրան տեղափոխել են ՁՊՎ: Հաջորդ օրը կատարվել է քննչական փորձարարություն, որի ժամանակ Ցվերիանովը մասնակիցներին առաջնորդել է Երևանի տարբեր վարչական շրջաններ ու մատնացույց արել այն վայրերը, որտեղից գողություններ կամ գողության փորձեր է կատարել: Ցանկության դեպքում անգամ իրենք չէին կարող Ցվերիանովին ուղղորդել, քանի որ տուժողներից շատերը կատարված գողությունների կամ դրանց փորձերի վերաբերյալ մինչ այդ ոստիկանություն չէին դիմել և իրենք այդ դեպքերից տեղեկություն չեն ունեցել: Քննչական փորձարարությանը, բացի թարգմանչից ու ընթերականերից, որոնց գումար չեն վճարել, մասնակցել է նաև Ցվերիանովի պաշտպանը, ով, անկասկած, կարձագանքեր, եթե այդ ընթացքում իրենց կողմից որևէ ապօրինություն կատարվեր:

Ըստ էության նույնաբովանդակ ցուցմունք է տվել նաև ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի օպերլիազոր Արման Մարգարյանը ով անձամբ ձեռնաշղթայով ուղեկցել Ցվերիանովին:

Քննիչ Ռոբերտ Թունիյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2012 թվականի նոյեմբերի 30-ին Ալեքսանդր Ցվերիանովի վերաբերյալ կազմված փաստաթղթերը ստանալուց հետո ձերբակալել է նրան, ապա որոշում է կայացրել հանրային պաշտպան և թարգմանիչ հրավիրելու մասին: Ցվերիանովի վրա մարմնական վնասվածքներ չի տեսել, վերջինս չի հայտնել ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ բռնություններ, սպառնալիքներ կիրառելու մասին: Քանի որ ձերբակալվածը գտնվել է ալկոհոլի ազդեցության տակ, նրան այդ օրը հարցաքննելը նպատակահարմար չի գտել: Տեղեկանալով ձերբակալված լինելու մասին՝ Ցվերիանովն իր պաշտպանի ու թարգմանչի ներկայությամբ հրաժարվել է արձանագրությունը ստորագրելուց, հայտնել, որ տանն է ալկոհոլ օգտագործել: Հաջորդ օրը ամբողջովին սթափ վիճակում գտնվող Ցվերիանովը պաշտպանի ու թարգմանչի

ներկայությամբ մի շարք գողությունների վերաբերյալ խոստովանական ցուցմունք է տվել, որից հետո կատարված քննչական փորձարարության ժամանակ առանց որևէ մեկի ուղղորդման՝ ինքնուրույն տարել ու մատնացույց է արել դեպքի վայրերը: Քննչական փորձարարությանը մասնակցել են ինչպես ընթերականեր, այնպես էլ կասկածյալի պաշտպանն ու թարգմանիչը: Ցվերիանովն իր կատարած գողությունների դեպքի վայրեր է մատնանշել ոչ միայն Երեբունու տարածքում, այլ նաև Քանաքեռ-Զեյթունում, Շենգավիթ ու Մալաթիայ-Սեբաստիա վարչական շրջաններում: Նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների հիման վրա Ալեքսանդր Ցվերիանովին մեղադրանք է առաջադրվել գողություն կատարելու համար, որում նա իրեն մեղավոր է ճանաչել:

Արտավազդ Պետրոսյանը, Արմեն Մկրտչյանը, Գևորգ Հակոբյանը, Մամիկոն Հակոբյանը, Արման Մարգարյանն ու Ռոբերտ Թունիյանն իրենց ցուցմունքները պնդել են նաև Ալեքսանդր Ցվերիանովի հետ առերեսումների ժամանակ:

Քննիչ Ռոբերտ Թունիյանի կողմից 2012 թվականի դեկտեմբերի 3-ին թիվ 12137412 քրեական գործով թարգմանիչ ճանաչված Լուիզա Պապյանը ցուցմունք է տվել այն մասին, որ մասնակցելով Ալեքսանդր Ցվերիանովի հետ կատարվող քննչական և դատավարական գործողություններին, համոզվել է, որ նա ինքն է խոստովանական ցուցմունքներ տալիս իր կատարած գողությունների վերաբերյալ, քննիչը կամ որևէ այլ անձ նրան չի համոզել կամ հարկադրել, որ խոստովանական ցուցմունքներ տա: Թունիյանն իր ներկայությամբ երբեք չի համոզել Ցվերիանովին, որ նա առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր ճանաչի:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ի կրտսեր տեսուչ-բուժակ Գայանե Ներսեսյանը ցուցմունք է տվել այն մասին 2012 թվականի նոյեմբերի 30-ին՝ ժամը 23.35-ին, ՁՊՎ տեղափոխված Ալեքսանդր Ցվերիանովի վրա մարմնական վնասվածքներ, այտուցներ չեն եղել, հակառակ դեպքում դրանք կարձանագրեր հատուկ մատյանում: Եթե անգամ վերջինս բանավոր հայտնած լիներ, որ իրեն ոստիկանությունում ծեծել են, այդ հայտարարությունը ևս բուժզննության մատյանում գրի կառներ: Ինքը հատուկ զննության է ենթարկել նաև Ցվերիանովի գլուխն ու ոտնատակերը, բայց որևէ վնասվածք, այտուց չի հայտնաբերել:

Ալեքսանդր Ցվերիանովի մասնակցությամբ կատարված քննչական փորձարարությանը ներկա գտնված ընթերականեր Գրիշա Խաչատրյանն ու Էմմա Բեգլարյանը ցուցմունքներ են տվել այն մասին, որ Ցվերիանովն է մատնացույց արել բոլոր դեպքի վայրերը և հայտնել, որ այդ վայրերից գողություններ է կատարել: Նրա վրա մարմնական վնասվածքներ չեն եղել: Ոստիկանության աշխատողներից որևէ մեկն այդ ընթացքում Ցվերիանովին չի հուշել և չի ուղղորդել: Քննչական գործողությանը մասնակցելու համար ոստիկանության աշխատակիցներն իրենց գումար չեն տվել, ծանոթացել են քննիչի կազմած արձանագրությանը և ստորագրել այն: Էմմա Բեգլարյանը նաև հայտնել է, որ փորձարարությանը մասնակցել են 2 կանայք՝ թարգմանիչն ու պաշտպանը, իսկ Գրիշա Խաչատրյանն այդ հանգամանքը չի հիշել:

Ռուսերենի ուսուցչուհի Գայանե Հակոբյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ոստիկանության Երեբունու բաժնում ոստիկանության աշխատակիցն իր ներկայությամբ բացատրություն է վերցրել Ալեքսանդր Ցվերիանովից, ով հայտնել է կատարած գողությունների մասին, ինչն էլ արձանագրվել է: Ցվերիանովը խոսել է հայերեն, գտնվել է ոգելից խմիչքի ազդեցության տակ, բայց իր ներկայությամբ նրան ոստիկանությունում ալկոհոլ չեն հյուրասիրել: Ոստիկանության աշխատակիցը Ցվերիանովի հետ լավ է վերաբերվել, նրա դեմքին կապտուկներ, այլ վնասվածքներ չի տեսել, վերջինս չի դժգոհել, որ ինքն իրականում գողություններ չի կատարել և որ իրեն հարկադրում են խոստովանել գողություններ կատարելու հանգամանքը: Իր ստորագրությամբ հաստատելով, որ ոստիկանը

ճիշտ ձևով արձանագրել է այն ամենը, ինչ հայտնել է Ցվերիանովը, հեռացել ոստիկանությունից: Նույնը հայտնել է նաև այն ժամանակ, երբ իրեն դատարան են կանչել:

Այսպիսով, ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի առանձին պաշտոնատար անձանց կողմից բռնությամբ զուգորդված պաշտոնեական լիազորությունների անցում կատարելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությամբ փաստական տվյալներ ձեռք չեն բերվել ոստիկանության ծառայողների կողմից ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցավոր արարք կատարելու վերաբերյալ, հետևաբար քրեական գործի վարույթը կարճելու մասին 2015 թվականի մարտի 31-ի որոշման դեմ տուժող Ալեքսանդր Ցվերիանովի ներկայացուցիչ Արթուր Սաքունցի բերած բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով և 263-րդ հոդվածի 2-րդ մասով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. ՀՀ հատուկ քննչական ծառայության խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Վ.Ավետիսյանի կողմից թիվ 62210814 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին 2015 թվականի մարտի 31-ին կայացված որոշման դեմ տուժող Ալեքսանդր Ցվերիանովի ներկայացուցիչ Արթուր Սաքունցի բերած բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2. Որոշման պատճենն ուղարկել Արթուր Սաքունցին՝ պարզաբանելով, որ որոշումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում այն կարող է բողոքարկվել դատարան:

ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության ավագ դատախազ՝

Գ.Վ. Գևորգյանս